«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

23 Դեկտեմբերի 2021, N 7 - 6

031101.00.7 «ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ՝ 031101.04.7 «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԵՎ 031101.16.7 «ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱՆԻՑ ՍԿՍԱԾ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով «Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամի ֆինանսավորմամբ ձևավորված «ՀՊՏՀ» ՊՈԱԿ, ՀՀ ԿԲ, ՈԱԱԿ և ԱՓՇՏԱԿ հիմնադրամներից կազմված մասնագիտական փորձագիտական խմբերի կողմից մշակված մագիստրոսական ուսուցման 031101.00.7 «Տնտեսագիտություն» մասնագիտության՝ 031101.04.7 «Միջազգային տնտեսական հարաբերություններ» և 031101.16.7 «Մակրոտնտեսական վերլուծություն» կրթական ծրագրերի ուսումնական պլանները հաստատելու մասին հարցը, **արձանագրելով,** որ կրթական ծրագրերը և դրանց ուսումնական պլանները մշակվել են «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, գնահատման և մշտադիտարկման կարգի» դրույթների պահպանմամբ, մշակող փորձագետների կողմից քննարկվել են կրթական ծրագրերը սպասարկող առանցքային ամբիոնների հետ, միաձայն՝ կողմ քվեարկությամբ հաստատվել են համալսարանի մակրոէկոնոմիկայի, միկրոէկոնոմիկայի, տնտեսագիտության տեսության, միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնների 2021 թվականի դեկտեմբերի 15-ի համատեղ նիստում և հաստատման են երաշխավորվել գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովի դեկտեմբերի 16-ի N 3 նիստում, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Հաստատել մագիստրոսական ուսուցման 031101.00.7 «Տնտեսագիտություն» մասնագիտության՝ 031101.04.7 «Միջազգային տնտեսական հարաբերություններ» կրթական ծրագրի նոր ուսումնական պլանը:
2. Հաստատել մագիստրոսական ուսուցման 031101.00.7 «Տնտեսագիտություն» մասնագիտության՝ 031101.16.7 «Մակրոտնտեսական վերլուծություն» կրթական ծրագրի նոր ուսումնական պլանը:

3. **2023-2024** ուսումնական տարվանից սկսած 031101.00.7 «Տնտեսագիտություն» մասնագիտության՝ 031101.04.7 «Միջազգային տնտեսական հարաբերություններ» և 031101.16.7 «Մակրոտնտեսական վերլուծություն» կրթական ծրագրերի առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելությունն իրականացնել և ուսումնական գործընթացը կազմակերպել նոր ուսումնական պլաններով:
4. Ներառյալ մինչև 2022-2023 ուսումնական տարին՝ 031101.00.7 «Տնտեսագիտություն» մասնագիտության՝ 031101.04.7 «Միջազգային տնտեսական հարաբերություններ» և 031101.16.7 «Մակրոտնտեսական վերլուծություն» կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրա ընդունված ուսանողների ուսուցումը շարունակել ընդունվելու պահի դրությամբ հաստատված և գործած ուսումնական պլաններով:
5. Հանձնարարել համալսարանի ուսումնական բաժնին՝ UMS համակարգում **2023-2024** ուսումնական տարվա համար մինչև 2023 թվականի մայիսի 30-ը 031101.00.7 «Տնտեսագիտություն» մասնագիտության՝ 031101.04.7 «Միջազգային տնտեսական հարաբերություններ» և 031101.16.7 «Մակրոտնտեսական վերլուծություն» կրթական ծրագրերի առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ուսուցման կազմակերպման համար ձևավորել սույն որոշմամբ հաստատված ուսումնական պլանների համապատասխան մոդուլները:
6. Հանձնարարել համալսարանի մակրոէկոնոմիկայի, միկրոէկոնոմիկայի, տնտեսագիտության տեսության, միջազգային տնտեսական հարաբերությունների բանկային գործի և ապահովագրության, ֆինանսների, տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի, վիճակագրության ու տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնների վարիչներին՝ 2022-2023 թվականներին ամբիոնների ակադեմիական կազմի ներկայացուցիչների վերապատրաստման և ատեստավորման կարգով սահմանված աշխատանքները պլանավորել և կազմակերպել ելնելով նոր ուսումնական պլաններում ներառված դասընթացների որակյալ սպասարկումն իրականացնելու անհրաժեշտությունից՝ մինչև 2022 թվականի մարտի 30-ը ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի և արտաքին կապերի դեպարտամենտի հետ հստակեցնելով վերապատրաստվող ակադեմիական կազմի ցանկը և վերապատրաստման մասնագիտական մոդուլները:
7. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

2021 թ. դեկտեմբերի 23
Երևան